


ՀԱՍՏԷ

Rédaction du Journal Arménien

"ARCHALOUYCE"

Hotel d'Arménie S. Buibulian

(Egypte) LE CAIRE



Ա Չ Գ Ա Յ Ի Ն . Գ Ր Ա Կ Ա Ն . Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ք Ե Ր Ք

Կ Ը Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ի Ծ Ա Ր Ա Ք Ը Մ Է Կ Ա Ն Գ Ա Մ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ

ԳՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆ

Տարեկան 40 Եգ. ոգր

Վեցամսյա 20

ԱՐՏԱՍԱՆՍԱՆ

Տարեկան 12 Եր

Ապահով բաժանորդագրութիւն չի բնութանուկը

Մտնուցումները մասնաւոր պայմաններով կ'ընդունուին .

Զեկագիրները եւ չեն տրուիր .

Թ.Ի.Ե.Յ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍՍԱՆ

Արտոնեայ եգիպտական Կառավարութեան

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՊԵՏ Ս. ՊԻՆՊՈՒԼՅԱՆ

Թ.Ի.Ե.Յ

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Չ Ե Կ Ո Յ Յ

ԳՐԱԿԱՆ

Արշալոյս ի վերաբերեալ ա մէն նիւթական գործողութիւններ պիտի կատարուին փոխան ստացա կաններու, որոնք անպայման պէտք է ստորագրուած ըլլան Վարչութեան Գաւազանի Մեծ. Տիար Սարգիս Պիւլպիւլեանի կողմէ, և խմբագրութեան կնիքը պէտք է կրեն:

Հակառակ պարագային՝ ո՛ր և է ստացական անվաւեր կը նկատուի:

ՅԵՏԱԴԱՐՁ ԱԿՆԱՐԿ ՍԸ

Օ

Արշալոյս ի ներկայ 14 դր. տարեշրջանի առաջին թիւովը խոստացած էի տեղեկագիր մը տալ. Մեր թերթին երկար ատենէ ի վեր չի հրատարակուելուն և մանաւանդ վերջին կարճատե հրատարակման և դադարին պատճառներուն հետաքրքիր եղողներուն գոհացում տալու համար:

Այսօր այդ պարտականութիւնն է որ պիտի կատարեմ, և անհրաժեշտ կը նկատեմ ասիկայ, որովհետեւ անցեալ դադարեալ տարեշրջանին մէջ ա՛յնպիսի դէպքեր, ա՛յնպիսի անիմաստ խօսուելուներ ականջս հասան, որոնց մասին թիւ մը մեր տեղական թերթերէն լսելով միայն հեռաւոր վայրերու մէջ գտնուող մեր հետաքրքիր ազգայինները լուսաբանելու պէտքը ըզգալի էր:

Միայն է որ ոմանք կը կարծեն թէ՛ թերթ մը անհասարակ և անարկ մ'է և անոր վարիչները շահախնդիր արարածներ են...

Ո՛ր և է թերթ իր պատկանած համայնքին հայելին է, և անոր աւաճ շատ անգամ նախապես վարիչները՝ այդ համայնքին յառաջդիմութեան ճամբուն վրայ իրենց կեանքը զոհարեող սուրբեր են, աւելի սուրբեր՝ քան մեր սրբազանները: Այս երկուքին սրբութեանը մէջ եղած տարբերութիւնը միայն սա՛ է որ, սրբազանները ունենան օգին մէջ կը խօսին, ու հովը կառնէ կը տանի իրենց ըսածները, իսկ թերթերու խնդ վարիչները ի-

րենց ըսածները կ'ստորագրեն վախառններու ձեռքը գտնուած մուրհակի մը պէս, սեղի ըլլալու պատրաստ վիճակի մէջ դնելով...

Հետեւաբար՝ թերթ մը՝ որ չափահասներու դպրոցն է, պէտք է որ այդ դպրոցին աշակերտները՝ չափահասները՝ լաւ գիտնան թէ՛ իրենց կրթարան-վարժարանին մէջ ի՞նչ կանցնի կը դառնայ, և շարահասարակութիւններէ, վայրավատին ու խարէական աստիճաններէ, և մանաւանդ նպաստաւորապէս սաղարուած հարամտութիւններէ ի՞նչ արդիւնքներ կրնան ծնիլ...

Ն. Վ. Պօղոս Փաշա շատ լաւ բացատրութիւն մը գործածած էր տեղ մը՝ Հ. Բ. Ը. Միութեան կազմին մասին: Ը. Բ. Ը. Միութիւնը ըսած էր, ապակիէ շինուած տունի մը պէտք է որ նմանի. ամէն մարդ հարկ է որ կարենայ անոր ներսը դիտել:

Եւ ինչո՞ւ այդպէս դիտելի և տեսնելի չըլլայ թերթի մը ներքին կեանքն ալ՝ երբ անպայման պէտք է ընդունինք որ՝ անիկա զուտ ազգային հաստատութիւն մ'է. ընդհանուր ազգին պատիւը և անոր արժանապատուութեան զգացումին չափանիշը...

Ուրեմն կարելի եղածին չափ սեղմ գծերու մէջ ամփոփեմ մեր տարեկան տեղեկագիրը. որ հակառակ իր դադարեալ վիճակին, ապարդիւն չըլլան մը չէր որ բոլորեց, զգացումներ շոյափելու և մարդերու հոգին ճանչնալու տեսակէտով...

Արշալոյս 1912 Ինկտեմբեր ամսոյ մէջ իր հրատարակութիւնը դադարեցնելու պարտաւորուեցաւ, նախ՝ իր նախկին ընկերով Պ. Գեւորգ Փափագեանի տունին մէջ լարուած շատ մը անախորժ հնարիչներու, և յետոյ՝ իր հասցէն «Շահէն Հաճէթեան» ըլլալուն պատճառաւ...

Առաջինը, Գեորգ Փափագեան, միմիայն իր անձնական շահերը նրկատի ունեցող մէկն էր: Ասոր ըսելիք չունիմ. իր սոցիալական ներուճ արդիւնքն էր որ պիտի վայելէր. և ո՞վ առանց վարձքի կուզէ և կրնայ աշխատիլ: Եթէ անոնցմէ ցաւելու և խորագէտ վշտանալու

պատճառ մը ունիմ, այն ալ՝ վերջին պահուն, 1913 Յունուար, երբ այլ ևս իրենցմէ հրաժեշտ առնելու հաստատուն և քանաւոր որոշումը տուի, իմագրատանս մէջ, ուր կը ննջէի միանգամայն, գտնուած մտքի և կարգ մը գործերու վերաբերեալ բոլոր պարունակութիւնները՝ թերթերու հաւաքածոյներ, այլևայլ գրութիւններ, նամակներ, մուրհակներ և շատ մը ուրիշ կարեւոր թղթեր ու գոց սնտուկ մը՝ և ի՞նչ կըսեմ, բոլոր ճերմակեղէններս վարդուելն էր, ինձի չի վերաբերած և ենթադրեալ պահանջներու պատուակին տակ...

Այս ամէնը մինչև հիմայ ալ հոն կը մնան, և կ'սպասեմ տակաւին սր՝ տեղական Դատարանի Ընդհ. Դատախազութիւնը, 26 Մարտ 1913 թուականու իրեն մատուցած խնդրագրոյս աջոյ մասին ալ վրայ մասնաւոր ուշադրութիւն դարձնելու բարեհաճի...

Սոյն խնդրագրով կը պահանջէի, Ա.՝ 913 Մարտ 1ին Արշալոյս Տպարանին և թերթին համար հաստատուած նամակատուփին «կոտորուելուն ու գողցուելուն» յանցաւորները գտնել ու պատժել:

Խնդրագրոյս այս մասը Տարագէլ-Ահմարի Ոստիկանութեան կողմէ արձանագրուեցաւ՝ բայց առանց հետեւանքի:

Բ.՝ կը խնդրէի Ընդհ. դատախազութեան, 1913 Փետրուար 9ին ճիշդ երեք ամիս, «Արշալոյս» տպարանին դուռը ապօրինի և բռնի պայմաններու մէջ գողցուելուն և իմ ընթացիկ գործերուս արգելք տրուելուն համար հատուցում մը:

Հոս կարծէ աւելցնել թէ՛ Արշալոյս տպարանին բռնութեամբ առնուած բանալին, որ Առաջնորդարանի քարտուղարներէն Տիար Ղեւոնդ Եկաւեանի քով կը գրտնուէր, հակառակ Պատ. Գաղ. Ժողովոյ մօտ իմ ըրած գրաւոր դիմումներուս, անկարելի եղաւ ստանալ զայն, իմ ընթացիկ գործերս շարունակել կարենալու համար:

Ուր ուրեմն, 1913 Մայիսի 8ին, Ապտինի Դատարանին կողմէ դուռը կոտորուելով տպարանին մէջ գտնուած գոյքերը սեղիի ներքեւ առնուեցան, և նոյն տարուայ Յունիս

11ին դատավար թիւեր տեղի ունեցաւ. իրարու վրայ դիմում վարձագրիներու և դատական ծախքերու փոխան, որոնց գումարը 4 ոսկիէն 22 ոսկիս ոսկիի կը բարձրանար, մէջը ըլլալով երեք ամիս տպարանը գողցուած մնալուն վարձքերն ալ՝ 913 Օգոստոս 24ին հրապարակային աճուրդով ծախուեցան տպարանական գոյքերը՝ Կառավարութեան ներկայացուցիչներուն կողմէ, ի մեծ ուրախութիւն ոմանց...

Խնդրագրոյս այս մասը իր գործնական լուծումը կը գտնէր բունականաբար քիչէն աւելի միակողմանի կերպով...

Իհաս յատկանշական և նրկատելի կը գտնեմ Ապտինի մեծաշարք դատաւորին խօսքերը, որ իր վճիռը արձակելէն յետոյ կուզէր բոլոր եգիպտական Հայերուս հասցէին:

«Դուք՝ քանի մը հայեր՝ իրարու հետ միանալով՝ խարդախութիւններ սաղարելու պըղօքներ կը կազմէք կոր...» Դատաւորը կը սխալէր...

Իմ վրայ չի ազդեց սակայն այս խօսքերը, որովհետեւ իմ խիղճս չափազանց հանդարտ էր... Բայց ի որտէ շատ ցաւեցայ, որ եգիպտական կառավարութիւնը՝ որուն նրկայացուցիչներէն մէկն էր յարգելի դատաւորը, Հայերուս վրայ այդպիսի տխուր գաղափար մը կազմելու պատճառներ ունեցած էր...

Արշալոյս թերթին դադարման պատճառներէն մէկն ալ, ինչպէս ըսի, Շահէն Հաճէթեան հասցէն եղաւ, որ հետեւեալ պարագաներուն մէջ կը դրուէր թերթին ճակատը:

Թերթին նոր ուժ մը տալու, զարգացնելու, ժողովուրդին աւելի օգտակար և մատչելի դարձնելու անկեղծ դիտաւորութեամբ, դիտաւորութիւն՝ որ միայն նիւթական միջոցներով կարելի էր իրագործել, ըստ առաջարկութեան և 6-7ամեայ փոքրիկն Շահէն Հաճէթեանի հրաչակեալ վաճառական հօրը ստիպումներուն, դրուար համաձայնութիւն մը գոյացուեցաւ և Արշալոյս տպարանը իր ցուցակագրեալ պարունակութեամբ 150 Եգ. ոսկու փո-

Առ Օր. Ս. Գ... եսև

Գերազնիւ Օրիորդ,

Ձեր «Կաղանդի պատմութիւն մը» գրական գողտրիկ նորավէպը կարգացի «Դայինք» թերթին մէջ, Խորաէ կը շը- նորհաւորեմ զձեզ, Ուրախ եմ որ գրա- կան ասպարէզին վրայ երեւնալու նա- խափորձեր կ'ընէք: Դուք ասպարջ աս- զանգաւոր գրագիտուհի մը ամէն ձեր- քեր: ու յատկութիւնները արդէն միա- ցուցեր էք Ձեր պարկեշտութեան եւ համեստութեանը հետ:

Բայց ի՞նչ տարօրինակութիւն, ո՞վ կը խորհէր թէ Օրիորդ, որ մը դուք ալ այս փշոտ ճամբան ձեռք պիտի առ- նէիք որ ներկայիս՝ մարդիկ զայն խեն- դութիւն, յիմարութիւն կը յորձորչեն, այն՝ անմտութիւն կը համարին բանաս- տեղծութիւնը, գրականութիւնը եւ գը- րողն ալ խենք, յիմար ու անմիտ:

Սրտի անհուն փշաքաղումով մը զիս կը լինէմ վաղամեակի եղբորդ Հրան- դին յետին խօսքերը, երբ հոգեվարժի- իր մնարին քով յալագին ու հառաչան- քով կ'ըսէր ինձի «Նիս ինչ ու մարդիկ գ'եղ չի հասկցան»:

Հրանդը՝ շատ կանուխ եւ վաղա- հասօրէն փակեց իր լուսավառ աչքերը, սրանցով անխառ մարդկութեան զէմ, իր երազները թաղեց կոյտ մը հողին ներքեւ, մեծ եղբայրնիդ ալ նուիրեց ինքնին, քը այն մեծ պարմանին - դրա- կանութեան - կեանքի միակ միւրթա- րութիւնն ու սփոփանքը այդ դիցուհիին ակնկալելով, եւ հիմակ դուք ալ կողքէք նուիրուի անոր՝ որուն միակ վարձատ- րութիւնն է, օրիորդ, սուսայտանք ու տառասպանք: . . .

Գրականութիւն, ո՞նչ այս մագնիսը որ կը քաշէ օրիորդ շատերը իրեն՝ ոչ ինչ ունի տալիք. ոչ ինչ ունի վար- ձատրելիք անոնց:

Բայց դիտող ասպարէզը ընդգրկած ըլլալուով համար չի պիտի մեղադրեմ, բանագրեմ զձեզ այն գրել հեռանդու- թիւն մըն է եւ գրողները օխտաօրներ որոնք վարսկուած են այս օխտաօխտ հեռանդութեանն եւ անոր ճիւղանիւղուն ներքեւ իրենց գոյութիւնը քաշկոտելու քրէական մեղքն են ունեցեր: Այո՛, չի պիտի մեղադրեմ զձեզ, որովհետեւ ըզ- զայնամով հողիները չեն կրնար լուս ապրիլ, անոնք պոթկալու, փայլեցելու պէտքը ունին: Կաղանդի Պատմութիւն- նիդ զգացուած, ապրուած, իրական կեանքին տխուր դրուագ մըն է ուր դե- ղեցիկ կերպով արտայայտուած էք՝ սպի- տակ թղթիկի մը վրայ, Ձեր հոգիին ամ- բողջ զգայնութիւնը, ցաւն ու խառվըը գնելով հոն:

Գրեցէ՛ք Օրիորդ, թո՛ղ մարդիկ խենդ կաշին գործն ու քերթողը, թո՛ղ գնտ անմիտները աստե՛ն գիրն ու գրա- կանութիւնը եւ թո՛ղ սուսայտն ու ընդ- վըզին գրչի վաստակաւորները, գրա- կանութիւնը մեր հոգիին սփոփանքն է, վայելքն է, զուարթութիւնն է, անխկա մեր իտէպն է, Ձերմագին բարեւներ Գրչի-եղբորմէզ:

Գահիրե Թ. Հ. ԹԳԳԸԱՆ

Ա յՈՒԿԱՐԷ ԶԻՓՐԻԱՆԻ

Իտալիոյ նորընտիր Երեսփոխան և ընկերվարական Ամիլզարէ Զիփ- րիանի մասին հետեւեալ ծանօ- թութիւնները կը գտնենք տեղույս էմիլր թերթին մէջ:

«Աղէքսանդրիոյ մէջ մեծ հետա- քրքրութիւն մը առաջ եկած է հետա-

ՍՍՅԲ ՍՍ

Տառապանքիս խաչին վրայ հեռապատ Մա՛յր իմ, հոգեոյս բանկ յոյսերը կը մեռնին, Մովի մ'առկայծ յոյսին նման հոգեվար ծու ալ կ'այրիմ, կ'այպառիմ:

Եւ վիշտերու կոտորածի մէջ դեռ յոյս կը զրպանուի եւ արշարոյսին փողփողուն ճառագայրին, յոյս մայրքումիս սեղիագին Աւա՛ղ մութ է հորիզոն:

Խաչեղբորս փայտին վրայ ալ կ'դաւլ Մեռնիլ կարօ՛ս՝ վերջադարձի յոյսերով Փախիլ կ'ուզեմ այս աշխարհէն անզգաւ Հանգիչի աշուս հողի մոկակ գրիկն մեջ:

Տուայտանքիս խաչին վրայ հեռ ի հեռ Մա՛յր իմ հոգեոյս բանկ յոյսերը կը մեռնին Մովի մ'առկայծ պրպրոյիս պէս նիւար ծու ալ կ'այրիմ, կը մեռնիմ:

Գահիրե ՍԻՐՎԱՐԴ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՆՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ

Ե ի

ԻՐ ՅՈՒԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

—*—

Րուպր Գոյեհի Յարգիլի Նախագահին Տր. Մոքի սոյն շահեկան բանախօսութիւնը որ այնքան ախորժով եւ հետա- քրքրութեամբ շուտով է հա- մանուն Գոյեհի աշակերտներուն կողմէ, կը խորհիմ թէ ես ալ օգտակար ծառայութիւն մը ք- տած պիտի ըլլամ, բարգիւնա- բար ներկայացնելով զայն «Ար- շարոյսի յարգելի ընթացող- ներուն և մանաւանդ մեր զրպ- րոցականներուն՝ որոնք բարո- յայտն մաքուր սրտովորտի մը մէջ ապրիլ կը սեղան իրենց փիլիսոփայական և մտաւոր ուժը սկզբաւոր ու անեղծ պահելու համար ապակառուց միջոցաւ մը մը բոլոր աղանդներէն ու գաղափարներէն: Ս. Թ.

Անհատներու փորձառական կանքը կը ցուցնէ թէ՛ աշխարհի մէջ ամէն մարդ փորձութեան ենթարկուած է:

Երբ մէկը՝ կըսէ թէ ես չեմ փոր- ձուած, այդ ըսել է թէ նա իր անձին գիտակցութիւնը չունի, իր տէրը չէ, եւ կամ մենք մէկզմէկու լէզուէ չենք հաս- կընար: Ամէն անհատ փորձուած է:

Ինձի այնպէս կը թուի թէ սակայն՝ զպրոցականները աւելի փորձութեան ենթակայ են, քան ուրիշ գոտակարգի պատկանող անհատներ:

Նախ մարմնական կամ ֆիզիքա- կան փորձութիւններ կան: Անոնք աւե- լի կը փորձուին մարմնապէս: Որովհետեւ ուսանողական նստուկ կեանքը եւ երե- ւակայութեան մասնունները տեղի կու- տան որ անոնք փորձուին:

Միմիայն մարմնական փորձութիւն- ներ չէ որ ունին, այլ նաեւ մեծագոյն աստիճանով մտքի փորձութիւններ: Փորձութիւնները ուրիշ կը բաժնուին զանազան ճիւղերու: սակայն ես անոնցմէ միայն մի քանիները պիտի թուեմ հոս: Եւ աւելի պիտի ծանրանամ մասնաւոր- րաբար անմաքուրութեան փորձութիւնն- րուն վրայ: Եւ եթէ ըսէք որ ինչ են անոնք, ես զանոնք պիտի կոչեմ ան- մաքուրութեան փորձութիւններ իրենց զանազան տեսակներով: Ինչպէս զորօ- րինակ, անժուժկալութիւն, գիրովու- թիւն, կեղծաւորական փորձութիւններ բարոյական ու կրօնական կեանքի մէջ: Անձնասիրութեան փորձութիւններ, ի-

րենց բոլոր փափուկ կողմերով, այս վեր- ջինը աւելի զօրաւոր տեղ մը կը բռնէ երիտասարդաց մէջ քան ուրիշներու: Իմացական հարաւորութեան փորձութիւն- ներ, առկա սոսկայի կերպով, որովհե- տեւ ենթական ինքն իր անձը կամ դիրքը չի ծանոցար:

Նա պատրաստ չէ ընդունելու ուրիշ օգնութիւն կամ օժանդակութիւն եւ ոչ ոք կրնայ օգնել իրեն:

Անձնաստուութեան փորձութիւններ զորօրինակ կեանքի ենթական երե- ւոյթներուն մէջ, ինչպէս դրամապաշ- տութեան ոգին, եւ վերջապէս անհատա- տութեան փորձութիւններ, գերմարդ- կային ու գերբնական զօրութեան զէմ: Այս վերջին փորձութիւնը տեսնուած է ամէն ազգերու ուսանողաց մէջ:

Երբեմն փորձութիւններ կարգ մը ցեղերու եւ երկիրներու յատուկ բաներ են միայն: Օրինակի համար ափիոն ու- տելը պարզ փորձութիւն մըն է Չինաս- տանցի երիտասարդներուն համար:

Շատ դիւրին բան մը չէ պատե- րազմի կամ դիմադրելու ուրիշ ցեղի երի- տասարդներուն համար ինքզինքնին բո- լորովին մաքուր ու գերծ պահելու այս փորձութիւններէն, եւ երկնաւոր Աս- տուծոյ մը ակնածանքը եւ սրբութեամբ մտեկալ:

Այո՛, կարծուածին չափ շատ դիւրին բան մը չէ, ինչպէս շատ երիտասարդներ կը վիսպեն իրենց բուն անձնական փոր- ձառութեամբը: Կատարի պատերազմ մ'է ան՝ որուն զէմ յարգիման կը գտնուին ընդզգեղու համար:

Աւելի ուշադրութեամբ քննենք մէկ կամ աւելի այս փորձութիւններուն, եւ ես կը խորհիմ թէ մենք պիտի սկսինք անոնց առաջին սա՛ պարզ փորձութիւն- ներէն մին:

Անմաքուրութեան փորձութիւններ: Ասիկա շատ հասարակ բան մըն է երի- տասարդներուն մէջ: Սուգուր ինձի ե- րիտասարդ մը թարմ ու կարօրի այտե- րով եւ ջղային զօրաւոր կարծով եւ ես պիտի դուրսեմ քեզի թէ, եթէ նա ան- մաքուրութեան անձնատուր չէ եղած, անպատճառ փորձութեան ենթարկուած է:

Շատ անտրամաբանական է ըսել թէ, սաստանս մեզ ամէն կերպով կրնայ փորձել ու խաբել բայց մեր ամենազօ- րաւոր կիւրքերը չի կրնար գրգռել:

Անմաքուրութիւն ըսելով ի՞նչ ըսել կուզենք: Ո՛չ միայն անբարոյիկ վայրբը յաճախել, այլ ուրիշ գաղտնի, Սօքրատ, կանն եւ անձը շարաշար գործածութեան մեղքերու մէջ ձգել:

Անմաքուր միտքն ու երեւակայու- թիւնը աւելի ծանր ու վտանգաւոր փոր- ձութիւններ են, որովհետեւ շատ դի- ւրին է յաղթել մարմինին երբ միաքը արդէն յաղթուած է:

Ինչո՞ւ համար պատերազմ հրատա- րակելու է ուրիշ անմաքուրութեան զէմ: Որովհետեւ նա կը մնասէ մեր մարմնին, մարդկային մաքնոյն բոլոր կէտերը քննող իմաստուն եւ սկսնաւոր բժիշկներ կը վկայեն եւ մարդ սրդէն ինքն ալ կ'զգայ այդ: Երբեք բաժանում եւ կամ բացառութիւն չկայ այս կէտին մէջ:

Երբեմն բժիշկներ կը շանձարարեն երիտասարդներուն անմաքուր վայրբը յաճախել, այսպիսիներ մարդկային ըն- կերութեան թշնամիներն են: Անոնք պէտք է վտարուին մարդկութենէն:

(Շար.) Թարգմ. Անգլ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աղէքսանդրիոյ և Գաւառներու համար գործակալներու պէտքը կայ փափաքողները կրնան դիմել «Արշարոյս» ի խմբագրութեան հաս- ցէին:

Խան գրաւի գրուեցաւ 1912 փետր. 12 թուականին: Գրաւին փոխար- փէքը սակայն՝ մաս առ մաս և հե- տըզեանէ պիտի ստացուէր՝ թերթին յառաջդիմութեան ծախսուելու հա- մար:

Վատահոլութեան խնդիր. այս վերջինը՝ որ ինձմէ զատ շատ շատե- րըն ալ կընէին արդէն ն. և Ա. Հա- ճէթեան եղբարց վաճառատան:

Բայց չարաչար սխալած եմ ե- ղեր . . .

Այս պայմաններուն և բանակ- ցութիւններուն մէջ ուշադրութիւն գրաւող բան մ'ալ եթէ կար, այն ալ փոքրիկն Շահէն Հաճէթեանի հօր զգուշաւոր և շատ փափուկ կեր- պով յայտնելը եղաւ ինձ թէ՛՝ «Բու անուղի ընա՛ւ չ'պիտի գտնուի քեր- քիկն մէջ. . .» Կասկածելի ու խոր- հրդաւոր խօսք մը: Ի՞նչ ըսել էր երբ այդ գործին 12 տարիներ ծա- ւալած ըլլալուս համար ներքին Գործոց նախարարութիւնը շնորհը կընէր ինձ արտօնութիւն տուլու ա- ռանց ո՛ւր է գժուարութեան, իսկ ասդին հայ մը, հայրենակից մը . . . , մամուլի սիրահար մը՝ կուրանար իմ տարիներու տաժանակիր յոգնու- թիւններս . . .

Ես գործին սիրոյն համար զս- հեցի իմ անունս ալ, թերթին մէջ Գարտուղարի համետ պաշտօնը ինձի վերցնելով, իմ նպատակս բարի էր- աւոր լաւ համոզուած էի:

Նամակատուի մը առնուեցաւ թերթին համար 1221 թուով. անոր բանալին ալ պէտք էր յանձնել, ու այնպէս եղաւ. ո՛չ ապաքէն պար- տապանները միշտ խոնարհելու ալ պարտական են. . .

Հազիւ 912 Նոյ. Իեկտ. ամսոց մէջ էր՝ որ զգալի եղաւ թերթին գրամական և այլ արժէքաւոր ա- ռարկաներու չիթութեանց և գան- ձոււթի գժուարութեանց մասնուած ըլլալը: Անկէ յառաջ գործին ըն- թացք տալու համար պատահական գժուարութեանց հանդէպ եղած դի- մուսները գրաւոր թէ բերանացի, անօգուտ անցած էին տրդէն . . .

Այսպէս թերթին տնտեսականը վտանգուեցաւ ծանրապէս և ակա- մայ գաղաքը պարտաւորիչ և ստի- պողական դարձաւ:

Ահա առանց սեթեւեթի չոր ու ցամաք և համառօտուած տեղեկա- գիրը 1912 տարեշրջանին, որ յուռա- ջիկայ 1913 տարեշրջանին ալ վրայ խորապէս պիտի ազդէր, ինչպէս պիտի տեսնենք ուրիշ անգամով մը: ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Արշարոյս»ը այլևս ձեռքէ չպիտի ծախուի, բաժանորդագրութեանց մէջ չիթութեաններ տեղի չունենալու հա- մար: Հետեւաբար մեր այն ազգայիննե- րը, որոնք թերթի բաժանորդագրուիլ կը հաճին, երրորդ թիւը չվերագրուե- նելէ յետոյ բաժանորդ նկատուելով ի- րենց հասցէները կը սպազորուին: Ձեռքէ գնել ուղղը բաժանորդաց ալ դիւրի- թիւն ընծայելու համար, կը խնդրենք որ իրենց անունը ծանուցանեն խմբագ- րութեան, փոստի միջոցաւ եւ սպազ- րեալ հասցէով զրկուելու համար իրենց թերթերը:

զիրներուն այն տեղեկութեան վրայ թէ՛ Ամիլգարէ Զիփրիանի ընկերվարականն...

Ամիլգարէ Զիփրիանի պաշտօնեայ եղած է Ramleh Railway ընկերութեան մէջ...

Իր տաժանակիր աշխատութեան պատժառուրքը աւարտելէն յետոյ Ամիլգարէ Զիփրիանի Ծրանսահանգնի 1871ին...

Երկար տարիներ կը մնայ Ծրանսայի ընկերվարական եւ յետոյ Երթնու կաշխատակցի ֆրոնտի Բիթիլիայի և Բու...

Իր արդարանալով, իբրև շահակելի գործունէութեան 1900ին շատաւայ Բուսիլիայի Ամիլգարէ Զիփրիանի սպանման և այս յանցանքին համար անհնազանդութեան (contumace) վճիռ կընդունի...

Յունո-թրքական առաջին պատերազմին Յունական բանակին միանալով քաջարար կը պատերազմի:

Վերստին մտնելով քաղաքական կեանքի մէջ, ամենէն ժողովրդական և ամենէն կարող պետերէն մէկը կը հանդիսանայ ընկերվարական-յեղափոխականներու շարքերուն մէջ: Նոյնիսկ որ մը թագաւորէն ունկնդրութեան կնդրուելի, որուն մէջ արժանի ազդեցութիւն կը գործէ:

Վերջին Հոկտեմբերի մէջ կատարուած ընդհանուր ընտրութեանց ժամանակ Ամիլգարէ Զիփրիանի Բուսիլիայի Խորհրդարանին երեսփոխան կընտրուի: Բայց օրինական երդումը Հանրավարական-Ընկերվարութեան գաղափարներուն հակառակ նկատելով կը մերժէ, եւ իր ընտրութիւնը ջուրը կիտայ:

Այս անգամ իր թեկնածութիւնը կուտայ միաժամանակ Թեմիլի և Բուսիլիայի ընկերվարականներուն եւ երեսփոխան կընտրուի:

Ամիլգարէ Զիփրիանի տարիքով 70ը անցած է:

ՏԵՂԱԿՍՍ

ԳԱՏԱՎԱԾՈՒ Մ

Հաւաստի աղբիւրէ կը տեսնուին թէ՛ Ապտինի նախնական դատարանին մէջ, այս շաբթու ընթացակարգութեան վճիռ մը արձակուած է ծանօթ Սիմօն Խորէնի (Խորենացի) անուն անձին նկատմամբ, որ ժամանակէ մը ի վեր արդէն փախուստ տուած էր:

Դատավարութեան նիւթը հետեւեալն է.

Ինչպէս մեր ընկերացիները գիտեն՝ Սիմօնիկը օրավերջ մը հըրատարակելու յաւակնութիւնը ունեցաւ ասկէ յառաջ, ու ատոր մանրամասնութիւնները համառօտի ծանօթ է մեզի:

Պ. Տնօրէնը՝ իր գրասենեակը հաստատած էր Շարա-Ապտին, թիւ

12, Տիար Սուրէն Չաքմաքճեանի գրավաճառանոցը, թերթին նիւթական մատակարարութեան պատասխանատուութիւնն ալ յանձնելով Տիար Չաքմաքճեանին:

Պ. Տնօրէնին համակիրները հողածութիւնը ունեցած էին 170 զորոշուց գրասեղան մը չայլծալ թել իրեն. որ իր աճապարանօք մեկնուէն յետոյ, մեզմէ գաղտնի տպագրուած «Տիւրքիստի սիւ ժուռնալ Արմենիկէն Արշալոյս» տիտղոսով այցեքարտով մը, հրահանգած էր Տիար Չաքմաքճեանը, գրասեղանը յանձնել սեղանաւոր Տիար Ներսէս Վարդանեանին, որուն կը պատիւանի եղբոր:

Տիար Ներսէս Վարդանեան՝ որ իր կարգին մեզի պէս յիշեալէն խաբուած մըն է եղբոր, ինչպէս շատերն ալ կըսեն, կերթայ իր գրասեղանը պահանջելու ու կը մերժուի բանաւոր պատճառներով: Իրենդիրը Ապտինի ոստիկանատունը և յետոյ դատարան կիցնայ և վճիռը կարճակուրի, որուն պարունակութեանն տակաւին անտեղեակ ենք:

Մեզի մութ մնացած կէտ մը է թէ՛ կայ, այն ալ աս է թէ՛ այդ ինքնակող «Տնօրէնը» իբրև «Սիմօն Խորէնի» դատապարտուած է թէ՛ իբրև Արշալոյսի տնօրէն:

Այս եղելութիւններէն յայտնի կերեւայ թէ մեր Պօմպիլի Միմօնիկը, բացի գրամ չորթելու մըտածումներէն, իրեն նպատակակէտ սերի եղբոր Արշալոյս լրագրին անունը պաշտօնական շրջանակներու առջև ազդարտելու ջանալը, և ցաւալին հոն է որ իր այս միջին խորհուրդներուն աշակերտներ ալ գըտնուեցան, ինչպէս պիտի տեսնենք յետոյ:

ՇԵՐԻՖ ՓԱՇԱՅԻ ՄԱՀԱՓՈՒՅԸ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ՄԵՂԱՎԱԾՈՒ

Անցեալ թուով տեղւոյս է ժիրք թերթէն անհելով գրած էինք թէ՛ ի մէջ զօրավար Շերիֆ փա Պօմպիլի Պօմպիլի ժողովրդական մահափ գիպտոսի մէջ, որ ի մէջ է եղբոր հսկելու տեղակալ է պէյի և իր բարեկամներուն վրայ:

Էժիրք հետեւեալ նոր մանրամասնութիւնները կուտայ իր ուր բաթ օրուան թուով:

Նախորդ օրը, կը գրէ մեր պաշտօնակիցը, ոստիկանութիւնը խուզարկութիւն մը կատարեց ի Շարա Մօհամմէտ Ալի թիւ 15, Արթիւր Եսաբէանի ընտանեացիներին մէջ և ձերբակալելով զայն՝ գրաւեց անոր բոլոր թուղթերը, որոնցմէ շատերը թուրքերէն գրուած էին:

«Այս թուղթերէն երեւան եկած է որ Արթիւր Եսաբէան իր պետին Ազմի պէյի հետ ունեցած թղթակցութիւնները Լուծի կեղծանունով կ'ստորագրէ եղբոր և նոյն

իսկ ձեռք անցուած է 9 Դեկտ. 1913 թուական և 1280 թիւ կրող Մա'ալիմ ստորագրութեամբ հեռագիր մը՝ հետեւեալ բովանդակութեամբ. Արթիւր Եսաբէան էֆ. Շարա Մօհամմէտ Ալի 15, Գահիրէ. Վաղը ժամը եօթուկէսին Ազմաբանգրիա եկէք և Մալիմ պանդուղը ի շեւանեցէք:»

Ոստիկանութեան խուզարկութիւն կատարած պահուն, Եսաբէան քաղաքէս մեկնելու պատրաստութիւններ տեսնելու վրայ է եղեր: Իր մաղերուն տարբեր գոյն մը տուած ու պետերն ալ խնամով անխնայ է եղեր, այնպէս որ՝ պիտի կրնայ եղբոր շփոթեցնել Եգիպտական ոստիկանութիւնը, որ եթէ ուզէ՝ կրնայ չի սխալի...:

Ոստիկանութեան կողմէ Արթիւր Եսաբէանի եղած հարցումներուն թէ՛ ինչու անխնայ էր իր պետերն, պատասխանած է թէ՛ իր ընկեր կուսակցականներ զինքը ըսպանել որոշած ըլլալուն համար կերպով մը փախուստ տալ կուզէ: Իսկ իր սենեակին մէջ գտնուած քանի մը շիշ թոյներու համար ըսած է թէ՛ Պրուսայէն բերած է չերամի գործածելու համար:

Ոստիկանութիւնը պաշարելուն թեամբ մտիկ ըրած է այս խօսքերը. Վերջին պահուն ստացուած տեղեկութիւններ կը հաստատեն թէ՛ ոստիկանութիւնը, բնականաբար յետ մանրակրկիտ քննութեան ազատ ձգած է Եսաբէանը:

Իբրև լրացուցիչ տեղեկութիւն փութանք անցնել թէ՛ Արթիւր Եսաբէան ասկէ տակաւին մէկ տարի առաջ տեղւոյս Գալլուտեան վարժարանին մէջ ուսուցչի պաշտօն կը վարէր:

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Այրի Տիկին Անթառամ Ծամլըբան և զաւակունք, Տիարք Մովսէս, Գրիգոր և Խոսնակ, Այրի Տիկին Լուսիա Հաճեթեան և որդին Արփիար, Տէր և Տիկին Մինաս Երիւնեան, Տէր և Տիկին Երուանդ Թաղիկեան, իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն ամէն ազգականաց և բարեկամաց, որոնք միութարութեան փութացին իրենց տաղերորդուն, հօրեղբորորդուն, եղբոր, մորքեռորդուն, մորեղբորորդուն:

ՏԻՍՐ ՎԱՅԷ ԾԱՍԼԵԱՆԻ

որ իր մահկանացուն կնքած էր Ամբրիկայի նիւեօք քաղաքին մէջ, և վերջերս անոր վաղաժաման մահուան լուրը հաղորդուեցաւ իրենց:

Նոյնպէս, Տիար Օհանէս Յովսէփեան, Տէր և Տիկին Ս. Զուրիկեան և Դուստրը Օրիորդ Պերճիկ, Տէր և Տիկին Սարգիս Եփրանոսեան և զաւակները խորին շնորհակալութիւն կը յայտնեն իրենց ազգականներուն և բարեկամներուն, որոնք

բարեհաճեցան ի միութարութիւն փութալ իրենց եղբոր և ազգականին,

ՏԵՂԱԿՍՍ ԶՈՎԱԿՈՒԹԵԱՆԻ
տխրաբեր մահուան առթիւ, որ յետ երկարատեւ հիւանդութեան երիտասարդ հասակին մէջ առ Աստուած փոխուած է, իր ծնողացը քով ի Մուսուրէի-Իւլ-Ազիզ:

ՀԵՌԱԳԻՐ

ՎԵՆԵՉԻՆՍ

Պերլի 27 Յունուար. — Կիլիսիա Կաշարի սարկարձիկն առքիւ. Սօժի կաշարձիկն և Պ. Վեճեզիոյ Աերկայ գնուեցան Աւերիգեանի Աերկայացունս:

— Պ. Վեճեզիոյ վաղը Վիեճեակ կը մեկնի:

— Ալիպէրի քերքը կը սեղեկուցնէ թէ՛ Պ. Վեճեզիոյ Ծրանսական Կառավարութեան հետ բանակցութիւն կը կատարէ 20,000,000 ուկրի փոխառութեան մը համար:

— Կուն Պերխորս վաղը պիտի ընդունի Պ. Վեճեզիոյ:

ՀԱԿԱԶԿԱԿԵՆ ՊՅՅԳՅԵ

Կ. Պոլիս 28 Յունուար. — Օւսկա Կառավարութիւնը հակահեղինակ պոյֆօրք վերցուց:

— Գեմալ պէյ Պրիմիերիէն Պերլի մեկնեցաւ, իշխան Վիսի հետ սակցելու համար:

ՊԱԵՌՈՒՄ

Հոռո 29 Յունուար. — Իսապական Արիդո քննաւորարանը պայֆօրք վերցուց:

Վեց պատկերածներ և շատ մը վիտարուակներ կան:

ՀԱՅ ՄԵՂԱՎԱԾՈՒ

Լոսնոն 31 Յունուար. — Հայոց Պատրիարքարանի վարչական խորհուրդը որոշած է որ Հայեր մասնակցիկ մեկուսական ընտրութիւններուն և այս որոշումը հայտարարուած է զաւաստական բոլոր Առաջնորդարաններուն:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

ԳԱԶԻՐԷ. Գիտուն. — Այդ խնդրով զբաղուած է արդէն մեր առաջին թիւին մէջ իսկ. կրկնութիւնները աւելորդ են. սպասենք որ երեսփոխան ժողովը Աստուած պետ Ն. Վ. Պողոս փաշան գոյ և համբերենք որ Առաջնորդ մը ունենանք:

ԳԱԶԻՐԷ Ա. Մ. — Ձեր նամակը ըստացուած է. Ձեր ըսելիքները աւելի լաւ բացատրելու համար պէտք է անմաք տեսնուի:

Տեղական նամակներուն երեք միւլի մի նամակաղբով պէտք է գնել և ոչ թէ կրկնու: Անշուշտ մեր նիւար քսակին թշնամի չէք:

ԳԱԶԻՐԷ Հ. — Այդ խնդրը արդէն բաւական լուսաբանուած է: Հարկ չկայ մանր ինքիքներ մատի փութօք ընկ. պարզապէս ժամովաճառութիւն է:

Ա Ձ Դ

Բնիկ Սպարդացի (Գոնիա) Յարութիւն Ա. Զօփուրեան անուն երիտասարդը որ օսմ. բանակին մէջ զինուոր էր, Պալքանեան պատերազմի սկիզբէն ի վեր անյայտացած է: Կը խնդրուի ամէն անոնցմէ որոնք յիշեալին ողջ կամ մեռած ըլլալուն մասին տեղեկութիւն մը ունին հաճին իմացնել հետեւեալ հասցէին: H.T. Poste restante le Caire

T I R I N G

Թ Ի Ր Ի Ն Ք


ՊԱՎԱԿԻ ՓՈՂՈՑ ԿԱԿԻՆ ՓԱՄՔԱԼ

Վ. Ա. ՋԱԼՈՅՍԱՆ ԿԻՑ

ԵՂԱՆՈՎԻՆ ՅԱՐՄԱՐԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍԱԾ ԵՆ ՓՈՒՔԱՑԷՔ ՕԳՏՈՒՒԼ

Կ. Պոլսոյ ամենածանօթ Թիֆլիսի Տան Գահիրէի նորահաստատ Մանածիւղն է .

ՅԼԷՕՐԻՍՔ ԻՒՆԻՎԵՐՍԷԼ



Մեծ վաճառատուն արուեստական ծաղիկներու, ծաղիկեղբորներու եւ փունջերու .

Մուսի Շարա եւ Միւզիկն Լասիւնց Եկեղեցոյն փողոցը

Տիպին ԼՈՒՍԻ Պ. 20ԼԱՔՕՅ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հայ հասարակութեան թէ՛ իր ծաղիկներու վաճառատունները փոխադրելով Շարա-էլ-Միւզիկին (Մուսիկ) Լասիւնց Եկեղեցոյն փողոցը . եւ անմիջեւի աժան գիներով կը վաճառէ արուեստական ծաղիկներ, ամենաշքեղ կողովներ, հարսանեկան գեղաշէն ծաղիկներ, կանանց գլխարկներու յատուկ փնջակներ եւ յուղարկաւորութեանց ծաղիկեղբորներ :

Թարմ ու բնական ծաղիկներու շքեր կը պատրաստուին սոյն վաճառատան մէջ . Մի՛ գիմէք օտարազգիներու, որովհետեւ Fleuriste Universelle վաճառատունը միակն է որ այդ ամեն մեծ ու պզտիկ վաճառորդներուն կը հայթայթէ արուեստական ամեն տեսակի եւ գոյնի ծաղիկները :

Ասիկայ ամենաստոյգ իրողութիւն մը ըլլալով, դիւրին է հաշուել որ այս վերջինները բուն գինէն աւելի շահով մըն է որ պիտի վաճառեն իրենց գիմողներուն, մինչդեռ ուղղակի Fleuriste Universelle վաճառատունը գիմելով տարակոյս չկայ թէ՛ անոնց շահածն ալ ձեր քսակը պիտի մնայ :

ՏՊԱՐԱՆ

Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս



ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանը՝ Արսովեայ Եգիպտական Կառավարութեան ներքին Գործոց նախարարութեան, ամենամեծ խնամքով կը սպասքէ .

1. — Արսովեայ Օրսիւրքեր, Հանդէսներ, Պոչիւրներ, Պարկերականներ եւ մանաւանդ Գիրքեր .
2. — Վաճառականական տետրեր՝ եւ գրասենեակի ամէն ճեւղակ սրպագրական պիտոյքներ՝ ամէն չեզոքով .
3. — Յայտարարութիւններ, շրջաբերականներ, նամակաւաղարկներ, Ըագրիւրներ, եւ այլն .
4. — Հարսանեկան տետրեր, մահազոյներ եւ այլն .

ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանին հասցեն է, ց'նոր սեօրիներին . Շարա Մուսիկն Եւ Միւզիկն Եկեղեցոյն փողոցը, Հարա - Էլ Մուսիկն - Էլ Գահիրէ, թիւ 40 . Տիւր Միւսու Շիֆիկեանի յարկարամէն մէջ .

THE 'SINGER' MANUFACTURING Co



Շարա-էլ-Միւզիկն Տպարանի Պրայնի սեփականութեանը մէջ .


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Միւզիկններն են եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 22,000,000 ծախուած է :

400 է աւելի վկայական եւ մեքենաներով վարձատրուած, Երաշխաստեայ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիւրքիական արուեստահանդիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԹՈՒՐԿԻՈՅ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵՍՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ , ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Միւզիկն ներկայացուցիմ

Չրի դասեր և նորոգութիւններ , յաճախորդաց տուններուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիւնքու . և նորոգութիւն ամեն կարգի մեքենայից

ԳԻՆ ԶԱՓԼ :

ԱՇԽԱՐՀԻ ԲՈՂՈՐ ԲԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՉ ՄԱՍՆԱՅԻՒՂՆԵՐ ՈՒՆԻ

ՃԵՇՏԱՐԱՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ՊԱՋՍՐ ՄԻՐՈՒՐ ԹԻՒ 19 ԱՒԵՏԻՍ ՊՅՍԱՅԵԱՆ

Մեր ճաշարանին մէջ կը պատրաստուին Եւրոպական եւ Արեւելեան ընտիր կերակուրներ . պանդուխտ երիտասարդները եթէ անգամ մը այցելեն մեծապէս գոհ պիտի մնան մատչելի գիներէն և սպասակութիւնէն . 14

Ի, Ա, ԵՐԱՆ

Հրատարակութիւններ ԱՅՄԵՐԻԿԱՆ ԳԻՐՔԵՐ ԱՄԷՆԻՆ ԱԼ

- Բառարան հայերեկե-անգլիերեկե սակ . 50
- Բառարան անգլիերեկե-հայերեկե » 75
- Հայ-անգլ. եւ անգլ. հայ միասին սայ . 1 -
- Պատ. գրուցարարութիւն հայ. անգլ » 150
- Գործնական առողջաբանութիւն » 150
- Սեռային առողջաբանութիւն » 125
- Գործն. եւ սեռ. առողջ. միասին » 2 -
- Ժողովրդային երգարան » 2 -
- Երգարան եւ սեռ. առողջ. միասին » 3 -
- Երգ. եւ գործն. առողջ. միասին » 3 -

Հասցէ՝ E. A. YERAN P. O. BOX 84, Sta. A. Cambridge, Mass.

Վ Ա Ր Ձ Ո Ւ

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԴԵՐՁԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ Փոխադրուած է Շարա Ապտ Էլ Ալիզ Ապտինի Գարագոյին մօտ .

Անոնք որ ճաշակաւոր գոտիւն մանենալու համար զանազան տեղեր դիմած ու զժգոհ մնացած են, թող անդամ մը մեր վաճառատունը այցելեն . պատրաստ եմ իրենց հետ պայմանաւորուել որ՝ եթէ իրենց յանձնարարութիւնը չը գոհացուցիչ չ'գտնեն, կանխավճարը ամբողջովին ետ պիտի ստանան .

Այս պայմանը՝ ճաշակաւոր հագուելու փափաքողներուն համար, նըպատաւոր առիթ մը պիտի ըլլայ :

Ապտինի ապսպրանքները նկատողութեան չեն առնուիր, եւ անոնք որ ինծի կը դիմեն, դիւրաւ կրնան ըմբռնել ապառիկին տարբերութիւնները, թէ գործի մաքրութեան եւ թէ գինքուն մասին . 1-50

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լ. ԵՆՈՎՔԵԱՆ ԵՒ ԸՆԿ. ԱՂԵՔԱՆԵՐԻՍ (Եգիպտոս)

Շորաթական կանոնաւոր երթեւեկ : Միացեալ Նահանգներու, Բահամայի եւ Հարաւային Ամերիկայի համար .

Գաղթականներու համար չափաւոր գին .

Աչքի քննութիւնը ձրիաբար կը կատարուի տեղւոյս մէջ, Մանրատան տեղեկութեանց համար դիմելի Գործակալութեան .

ԻՐՉԱՄԷՏ ՍԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ Հեռագրական Հասցէ - ԼԵՆՕՔՕ

Փոսթ արկի թիւ 887

Թուրքիոյ գաւառներու մէջ փոխ - գործակալներ կը փնտրուին

Արտեստր՝ ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Սեփական Տպարան ԱՐՇԱԼՈՅՍ Լրագրոյ